ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 398

11 հոկտեմբերի 2024 թվականի N - Ա

ՆՅՈՒԹԱԿԱՆ (ԴՐԱՄԱԿԱՆ) ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 238-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

որոշում եմ.

1. Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետի աշխատակազմ դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պարբերաբար կազմակերպել քննարկումներ և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2022 թվականի հունիսի 22-ի «Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 28-ի N 84-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 238-Ա որոշումը:

Recoverable Signature

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. հոկտեմբերի 11
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2024 թվականի
հոկտեմբերի 11-ի N 398 - Ա որոշման

Կազմ

Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետի աշխատակազմ դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության հանձնաժողովի

Նարե Ղազարյան	-	Սյունիքի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Գայանե Սարգսյան	-	Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Կարեն Բալյան	-	Սյունիքի մարզպետի խորհրդական
Մարինե Աբգարյան	-	Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ
Սեյրան Ավետիսյան	-	Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
Արմեն Թադևոսյան	-	Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Արամ Շահնազարյան	-	Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Աննա Ոսկանյան	-	Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**